ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 87

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 20 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով. *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 20 արտահերթ նիստի օրակարգը.

1. Արամուս համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 92-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
2. Արամուս համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին.
3. Արամուս համայնքում հաշվառված 1-ին կարգի հաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին 2020 թվականի ընթացքում ամենամսյա դրամական օգնություն տալու մասին.
4. «Հայաստանի Համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը 2020 թվականին անդամակցելու մասին.
5. Արամուս համայնքի սոցիալապես անապահով խավին աջակցություն ցուցաբերելու մասին.
6. Արամուս համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին.
7. Արամուսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
8. Արամուսի Մարզամշակութային Կենտրոնի աշխատակիցների 2020 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
9. Արամուս համայնքի և «Ջրային տնտեսության ԾԻԳ» պետական հիմնարկի միջև համաֆինանսավորման պայմանագիր կնքելու մասին.
10. Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի N 4 որոշման մեջ ավելացում կատարելու մասին.
11. Հողամասերի նպատակային նանակության փոփոխության մասին.
12. Արամուս համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին.
13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 88-Ն

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 92-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արամուս համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Արամուս համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 92-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Որոշման հավելվածի 1-ին հատվածի 1000-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունյակների «105895,7» և «105895,7» թվերը փոխարինել համապատասխանաբար «108895,7» և «108895,7» թվերով:
   2) Որոշման հավելվածի 1-ին հատվածի 1352-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակների «5000,0» և «5000,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «8000,0» և «8000,0» թվերով:
   3) Որոշման հավելվածի 2-րդ հատվածի 2000-րդ տողի 6-րդ և 7-րդ սյունակների «134029,7» և «105895,7» թվերը համապատասխանաբար փոխարինել «137029,7» և «108895,7» թվերով:
   4) Որոշման հավելվածի 2-րդ հատվածի 2100-րդ տողի 6-րդ և 7-րդ սյունակների «45475,7» և «44075,7» թվերը փոխարինել համապատասխանաբար «48475,7» և «47075,7» թվերով:
   5) Որոշման հավելվածի 2-րդ հատվածի 2110-րդ տողի 6-րդ և 7-րդ սյունակների «44170,7» և «42770,7» թվերը փոխարինել համապատասխանաբար «47170,7» և «45770,7» թվերով:
   6) Որոշման հավելվածի 2-րդ հատվածի 2111-րդ տողի 6-րդ և 7-րդ սյունակների «44170,7» և «42770,7» թվերը փոխարինել համապատասխանաբար «47170,7» և «45770,7» թվերով:
   7) Որոշման հավելվածի 3-րդ հատվածի 4000-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակների «134029,7» և «105895,7» թվերը փոխարինել համապատասխանաբար «137029,7» և «108895,7» թվերով:
   8) Որոշման հավելվածի 3-րդ հատվածի 4050-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակների «105895,7» և «105895,7» թվերը փոխարինել համապատասխանաբար «108895,7» և «108895,7» թվերով:
   9) Որոշման հավելվածի 3-րդ հատվածի 4100-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակների «57120,0» և «57120,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «60120,0» և «60120,0» թվերով:
   10) Որոշման հավելվածի 3-րդ հատվածի 4112-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակների «4100,0» և «4100,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «7100,0» և «7100,0» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԵԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 89-Ն

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածների պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Սահմանել Արամուս համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2. Սահմանել Արամուս համայնքի վարչական տարածքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 1
Արամուս համայնքի ավագանու
2019 թ. դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշման

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

բբ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

բգ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ

բդ) 3000-ից ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 50000 դրամ

գ) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ.

գբ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

զ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7650 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13650 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7650 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13650 դրամ:

8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն օրացույցային տարվա սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 դրամ.

դ) խաղատների համար՝ 500000 դրամ.

ե) շահումով խաղերի համար՝ 300000 դրամ.

զ) վիճակախաղերի համար՝ 100000 դրամ:

10. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3500 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5250 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15500 դրամ:

11. Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

դ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 125 դրամ:

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 50 դրամ.

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

13. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է 3500 դրամ:

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է 200000 դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

13. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ:

Հավելված N 2
Արամուս համայնքի ավագանու
2019 թ. դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշման

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում 20000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար է սահմանվում՝ 3000 դրամ:

3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ յուրաքանչյուր մասնակցից վճար է սահմանվում 5000 դրամ:

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ, կրկնօրինակներ տրամադրելու համար, ընթացիկ տարվա համար՝ 3000 դրամ:

5. Համայնքի կողմից աղբահանության դիմաց գանձվող վճարները 2020 թվականի համար գանձել հետևյալ կերպ՝

N	Աղբահանության վճարի տեսակները	Դրույքաչափերը (դրամ)
1.	**Կենցաղային աղբի համար՝**	
1)	անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական	150 (մեկ հարյուր հիսուն)
2)	բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ 1 քմ մակերեսի համար ամսական	15 (տասնհինգ)
2.	**Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝**	
1)	ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար	3000 (երեք հազար)
2)	ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար	10000 (տասը հազար)

5.1. Սույն աղյուսակի 2-րդ կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

Հ/հ	Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբ արտադրող օբյեկտների անվանումները	Չափման միավորը	Ամսական վճարի չափը (դրամ)
	I. Առևտրի օբյեկտներ		
1.	Մթերային խանութներ, հանրախանութներ	1քմ	50 (հիսուն)
2.	Շինանյութի, տնտեսական ապրանքների խանութներ, սուպերմարկետներ	1քմ	50 (հիսուն)
3.	Գյուղմթերքի շուկաներ, բանջարեղենի և ծաղկի խանութներ	1քմ	50 (հիսուն)
	II. Բժշկական հաստատություններ		
1.	Դեղատներ	1քմ	15 (տասնհինգ)

2.	Հիվանդանոցներ, կլինիկաներ	1քմ	15 (տասնհինգ)
	III. Ավտոտրանսպորտի սպասարկման օբյեկտներ		
1.	Ավտոարհեստանոցներ, բենզալցակայաններ, գազալցակայաններ	1քմ	50 (հիսուն)
2.	Ավտոլվացման կետեր	1քմ	50 (հիսուն)
	IV. Ռեսումնական հաստատություններ		
1.	Դպրոցներ, մանկապարտեզներ, ուսումնարաններ, համալսարաններ, քոլեջներ	1 սան	3 (երեք)
	V. Կենցաղային սպասարկման կազմակերպություններ		
1.	Վարսահարդարման և գեղեցկության սրահներ	1քմ	50 (հիսուն)
2.	Հյուրանոցներ, հասարակական սննդի օբյեկտներ (սրճարաններ, ռեստորաններ, բարեր և այլն)	1քմ	50 (հիսուն)
	VI. Մշակութային և սպորտային հաստատություններ		
1.	Ակումբներ, կինոթատրոններ, համերգասրահներ, թատրոններ, գրադարաններ	1 տեղին	3 (երեք)
	VII. Արտադրական կազմակերպություններ		
1.	Գործարաններ	1քմ	5 (հինգ)
2.	Հացա-բուլկեղենի արտադրության տարածքներ	1քմ	50 (հիսուն)

6. Համայնքի ղեկավարի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը 2020 թվականի համար գանձել հետևյալ կերպ՝

N	Թույլտվության վճարի տեսակը	Դրույքաչափերը (դրամ)
1.	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի հավաքման և տեղափոխման թույլտվության համար	1000 (մեկ հազար)
2.	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ զանգվածի մեկ տոննայի հավաքման և տեղափոխման թույլտվության համար	2500 (երկու հազար հինգ հարյուր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 90

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արամուս համայնքի բյուջեի համապատասխան բաժնում նախատեսել և համայնքում հաշվառված 1-ին կարգի հաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին 2020 թվականի ընթացքում տալ ամենամսյա դրամական օգնություն՝ 5000 (հինգ հազար) դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀՐԱՅՐ ՆԵԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀՀ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔ *03502169*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 91

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. 2020 թվականին անդամակցել "Հայաստանի Համայնքների միություն" իրավաբանական անձանց միությանը:
2. Համայնքի բյուջեում նախատեսել իրավաբանական անձանց միության անդամավճար 2020 թվականի համար մեկ բնակչի հաշվով 10/տասը/ դրամ մեկ տարվա համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ *03502169*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 92

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արամուս համայնքի բյուջեի համապատասխան բաժիններում նախատեսել միջոցներ՝ 2020 թվականի ընթացքում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների՝ սոցիալական պայմանների բարելավման, առողջական խնդիրների լուծման և պետական ԲՈՒՀ-երում սովորող ուսանողների վարձավճարների ուղղությամբ տրվող համապատասխանաբար դրամական օգնությունների, բուժ. օգնությունների և ուսման վարձերի փոխհատուցման համար:

2. Դիմումների քննարկման և գումարների տրամադրման հարցերը թողնել համայնքի ղեկավարի և համայնքում ստեղծված սոցիալական ծառայության օգնության հանձնաժողովի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՀԾ *03502169*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 93

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արամուս համայնքի ղեկավարի աշխատավարձը 2020 թվականի համար սահմանել 344000/երեք հարյուր քառասունչորս հազար/ դրամ.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 94

ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Արամուսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔ ՊԵՏԱՐԱՆ ՀԾ *03502169*

Հավելված
Արամուս համայնքի ավագանու
2019 թ. դեկտեմբերի 26-ի N 94 որոշման

ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ

1. Համայնքապետարանի աշխատակիցների քանակը՝ 14:

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Հավելավճար	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8
			Քաղաքական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար		1	344000			344000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	230000			230000
			Հայեցողական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավարի օգնական		1	180000			180000
			Համայնքային ծառայողներ				
1	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	280000	22400		302400
2	Գլխավոր մասնագետ	2.3-1	1	250000	20000		270000
3	Գլխավոր մասնագետ	2.3-2	1	250000	20000		270000
4	Առաջատար մասնագետ	3.1-1	1	225000	18000		243000
5	1-ին կարգի մասնագետ	3.2-1	1	185000			185000
			Տեխնիկական սպասարկման անձնակազմ				
1	Գործավար		1	155000			155000
2	Հավաքարար		1	90000			90000
3	Աղբատար մեքենայի վարորդ		1	195000			195000
4	Ծառայողական վարորդ		1	140000			140000
5	Գյուղատնտես		1	145000			145000
			Քաղաքացիական աշխատանք կատարողներ				
1	Անասնաբույժ		1	120000			120000
	Ընդամենը		**14**	**2789000**	**80400**		**2869400**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 95

ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Արամուսի Մարզամշակույթային Կենտրոնի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020 թվականի համար՝ համաձայն հավելվածի, իսկ երաժշտական դպրոցի ուսուցիչների մեկ դասաժամը սահմանել՝ 1974 թվականից հետո ծնված ուսուցիչների համար 3375 դրամ, իսկ մինչև 1974 թվականը ծնված ուսուցիչների համար 3073 դրամ:
2. Սահմանել Արամուսի Մարզամշակույթային Կենտրոնի երաժշտական բաժնի 1-7-րդ դասարանների և պարի խումբ հաճախող աշակերտների ուսման վարձերը հետևյալ դրամաչափերով.

ա) 1 երեխայի համար ուսման վարձ սահմանել 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ՝ 1-3 դասարան.
բ) 1 ընտանիքից երկու և ավելի երեխայի համար՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ՝ 1-3 դասարան.
գ) 1 երեխայի համար ուսման վարձ սահմանել 2000/երկու հազար/ դրամ՝ 4-7 դասարան.
դ) 1 ընտանիքից 2 և ավելի երեխայի համար՝ 2000/երկու հազար/ դրամ՝ 4-7 դասարան.
ե) Վոկալի խմբակ հաճախող մեկ երեխայի համար՝ 1000/մեկ հազար/ դրամ.
զ) պարի խմբակ հաճախող մեկ երեխայի համար՝ 4000/չորս հազար/ դրամ, մեկ ընտանիքից երկու երեխա հաճախելու դեպքում 4000/չորս հազար/ դրամ.
է) ՄՄԿ-ում սովորող համայնքում հաշվառված և բնակվող ծնողազուրկ երեխաների համար ուսման վարձերը զեղչել 100%-ով.
ը) ՄՄԿ-ի երաժշտական դպրոցի ժող. գործիքների բաժնում ուսուցումն անվճար է.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Արամուս համայնքի ավագանու
2019 թ. դեկտեմբերի 26-ի N 95 որոշման

ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Աշխատակիցների քանակը՝ 18:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	8
1	Տնօրեն	1	1	145000	145000
2	Փոխտնօրեն ուս. գծով	1	0,5	100000	50000
3	Տնտեսվար	1	1	100000	100000
4	Հաշվապահ	1	1	130000	130000
5	Գործավար	1	1	93000	93000
6	Գրադարանավար	1	1	123000	123000
7	Պարուսույց	1	1	94000	94000
8	Շվիի դասատու	1	0,75	94000	70500
9	Պահակ	1	1	113000	113000
10	Տնտեսական աշխատող	1	1	115000	115000
11	Երգի դասավանդող	1	0,33	94000	31020
12	Ուսուցիչ	1	0,979	73752	72203
13	Ուսուցիչ	4	4,15	94000	390100
14	Վոլեյբոլի մարզիչ	1	0,5	94000	47000
15	Ֆուտբոլի մարզիչ	1	1	94000	94000
	Ընդհամենը	18	16,209	1556752	1667823

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 96

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԻԳ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Արամուս համայնքի և «Ջրային տնտեսության ԾԻԳ» պետական հիմնարկի միջև համաֆինանսավորմամբ ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգնման պայմանագրի կնքմանը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 97

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի "Արամուսի համայնքապետարանի և մարզամշակույթային կենտրոնի ակտիվների և պարտավորությունների 2018 թվականի գույքագրման մասին" N 4 որոշման մեջ կատարել հետևյալ ավելացումը.

1) Հիմնական միջոցների գույքագրման հավելված N 1-ի ցուցակում ավելացնել հետևյալ նոր՝ 106-րդ տող՝ «Գրասենյակային աթոռ - 2 հատ - 130.0 հազ. դրամ» բովանդակությամբ.

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 98

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 59 որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի՝ Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, Կարեն Գրիգորի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, 07-013-0006-0018 կադաստրային ծածկագրով (վկայական N 11082014-07-0044) գյուղատնտեսական նշանակության 0,1042հա 2-րդ կարգի ջրովի վարելահողից 0,0525հա (համաձայն հատակագծի) հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման:
2. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և համաձայն Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի՝ Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, Գայանե Վահեի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող, 07-013-0043-0026 կադաստրային ծածկագրով (վկայական N 13092019-07-0013) գյուղատնտեսական նշանակության 0,35 հա 4-րդ կարգի ջրովի վարելահողի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված Կարեն Գրիգորի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0006-0018 կադաստրային ծածկագրով 0.1042 հա հողամասից 0,0525 հա հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ եռամսյա ժամկետում օրենքով սահմանված կարգով տվյալ պահին գործող հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը՝ 536025 (հինգ հարյուր երեսունվեց հազար քսանհինգ) դրամը համայնքի բյուջեի N 900105205174 հաշվեհամարին վճարելուց հետո:
4. Սույն որոշման 2-րդ կետում նշված Գայանե Վահեի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0043-0026 կադաստրային ծածկագրով 0,35 հա հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ եռամսյա ժամկետում օրենքով սահմանված կարգով տվյալ պահին գործող հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը՝ 3932250 (երեք միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր հիսուն) դրամը համայնքի բյուջեի N 900105205174 հաշվեհամարին վճարելուց հետո:
5. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբեր 2019 թվականի N 99-Ն

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Արամուս համայնքի 2020 թվականի բյուջեն՝

1) Եկամուտների գծով (հատված 1) 114942.6 հազար դրամ

2) Ծախսերի գործառական դասակարգման (հատված 2) 222492.6 հազար դրամ

3) Ծախսերի տնտեսագիտական դասակարգման (հատված 3) 222492.6 հազար դրամ

4) Տարեսկզբի ազատ մնացորդը (հատված 4) 108000.0 հազար դրամ

5)Ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման (հատված 6) 277942.6 հազար դրամ

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակի 15%-ը:

3. Ֆոնդային բյուջեի ծախսերը կատարել հետևյալ հաջորդականությամբ՝

1) Տարեսկզբի մնացորդի հաշվին.

2) Ֆոնդային բյուջեի եկամուտների հաշվին.

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

5.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ